

	Էջ		PAGE
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ		ARTICLE DE FOND	
Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. — Տոկալ եւ պայքարի	1	Djanachian P. M. — Résister et combattre	1
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ		PHILOLOGIE	
ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍ ՏՐԻԷՍՍԵՆ. — Ս. Բարսեղի Հայ ձեռագիրներու հաւաքածոն (թրգ. Հ. Ք. Վ. Չրաքեան)	6	Innoc. W. Driessen, O. P. — Les recueils des manuscripts arméniens de St. Basile (trad. en arm. par le Rév. P. Chérubin Tcherakian)	6
ԿՐՕՆԱԿԱՆ		RELIGION	
Հ. ՆԵՐՍԵՍ ՏԷՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ. — Մեր նախ- նեաց հաւատքը. Ս. Ներսէս Շնորհալի եւ Պետրոս Առաքեալ	22	Der Nersessian P. N. — La foi de nos ancêtres. — S. Nersès le Gracieux et l'Apôtre S. Pierre	22
ԳՐԱԿԱՆ		LITTÉRATURE	
Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. — Գուրգէն Մխիթարեա- նի հետ (գրախօսականի տարիմով)	11	Djanachian P. M. — A Mr. Kourkin Mekhi- tarian (à l'occasion d'une recension)	11
ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ. — Տաղարան Յովհաննէս Թրկուրանցու «Ի վերայ անգղամ կա- նանց» տաղի մը հին տարբերակը	29	Erémian Aram. — Une variante ancienne d'un poème «sur les femmes méchan- tes» du poète Ohannès Telgourantzi	29
Հ. ԵՓՐԵՄ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ. — Ծաղկում փչումը սրտի...	31	Der Ghazarian P. E. — Floraison du cœur écrasé (poésie)	31
Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. — Զինուորին	32	Djanachian P. M. — Au soldat (poésie)	32
ՄԱՌԻ ԱՐՄԱՃԵԱՆ. — Գրիգոր Նարեկացի (Իր հազարամեայ յարեւանին տարի)	33	Atmadjian Marie. — Grégoire de Narek (à l'occasion de son jubilé millénaire) (poésie)	33
ԱՐԱՄԱՅԻՍ ԱՐԱՊԵԱՆ. — Մահ քաջարկուն	34	Serabian Aramais. — La mort du soldat va- leureux (poésie en prose)	34
ՊԱՏՄԱԿԱՆ		HISTOIRE	
Բժ. Պ. ՄԻՍԱԲԵԱՆ. — Լուի Փաստէօս. Ա. — Մարգր (շարք)	36	Missakian Dr. B. — Louis Pasteur (1822-1895) L'homme (suite)	36
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ		RECENSIONS	
Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. — Ֆրիկ Գիւան. հրատ. Տիրայր Արքեպիս. Նիւ Եորք 1952	42	Djanachian P. M. — «L'archive de Frig» — pub. par Tirayr archev. New York. 1952	42
Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. — «Զրոյց» Կ. Փոլսեան- նի, Փարիզ 1952	42	Djanachian P. M. — «Récit» de G. Pola- dian, Paris 1952	42
Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ. — Որ մերկաւ էին գաւ- ումը (վէպ) Սմբատ Փանոսեանի, Պէյ- րութ, 1953	43	Djanachian P. M. — Ceux qui étaient séparés par la tempête (roman). Beyrouth, 1953	43
ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ		ECHO ARMENIEN	
*** Արժանատի գնահատում մը Ֆիլատեղիայի Հայ Կաթողիկէ ժողովրդագետին	48	*** — Mgr. S. Stephanian, nommé Vicaire Patriarcale pour les Etats - Unis	48

ԲԱՉՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1954

ՃԺՖ. ՏԱՐԻ



ՅՈՒՆՈՒՍԱՐ-ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻ 1-2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՏՈԿԱԼ ԵՒ ՊԱՅՔԱՐԻԼ

ՏԱՐԽԵՆԵՐԸ որ կը քաշալին մին միշտին ետեւէն, կարճեալ քէ միշտ քան
մը կը տանին մեզմէ քան քէ կը բերեն.

Մեր պատմութեան տխուր էջերը ապացոյց են այս հաշաւ.
տուրին. կորուստ ոչ միշտ կորուստ՝ ազգային անկախութեան (Կիլիկիան
ըջանի) քարանձակ վերջ. Յրուանը մեր ժողովուրդին զանազան ազգերու
հողային տանձաններէն ներս՝ մեզի համար աղետալի եղած է անտարակոյս.
Գաղթականութիւնը, ափիւշք, ուճացում՝ ահա մեր ձախառագրին տխուր կողմերը.
Հարկ չկայ մեր հին գաղթականութեանց պատմութեան մանրամասնու-
թիւններուն մէջ իջնելու. Ամէն գիտակից հայ համոզուած է մեր կորուստ-
ներու անաւորութեան վրայ.

Ժողովուրդները չեն ապրիր միայն իրենց անցեալով. Ներկայի շոշա-
փելի իրականութիւնը, կեանքի նորանոր պահանջները՝ քաղաքական ոչ
ընկերային գետնի վրայ՝ կը կազմեն առարկան վարիչներու շուրջ մտահո-
գութիւններուն.

Մենք ալ ոչնեցած ենք փառաշուր անցեալ մը մեր հողին վրայ. Իսկ
մեր ներկան. Մեր ներկան, մեր մտահոգիւ այսօրը Հայ Միջինքն է. Որովհետեւ
են, սակայն, մեր շուրջ ճրագիրները, որպէս զի ապրի հայ ժողովուրդը հայ
զգացումով, հայ ոգիով և հայ լոռաշուր ապագայի մը ոչ քէ երազային

յոյսերովը, այլ հիմնուած ակնկալութիւններով՝ որոնց ծայրն ըլլայ վստա-
հօրէն ձեռք բերուելիք հաստատուն իրականութիւնը, մեր ցանկալի համայ-
նական վերականգնումը:

Վերջին յիշուել տարիներու մեր մերձաւոր անցեալին վրայ նկատուած
հարեանցի ակնարկ մ'իսկ կը բաշէ՝ որպէսզի սոսկանք ի տես այն անբռնելի
քաղաքական ու ընկերային վերիվայրումներուն, սայրաքոչումներուն, որոնց
հետեանքով մեր դատը չյանգեցաւ փախաքոչում եզրակացութեան: Մար-
միներ, միութիւններ, անհատներ ունին հոն իրենց բաժինը պատասխա-
նատուութեան՝ յետ դարաւոր թշնամիին անմարդկային արարքներուն՝ բնա-
ջրնջելու ժողովուրդ մը, որուն իմացական կարողութիւնները միայն արգելք
կը հանդիսանային ինչ ինչ տէրութեանց առաջաւոր Ասիոյ մասին մշակած
աշխարհակարգական ճրագիրներուն:

Այդ ահաւոր անկումին պատճառով է որ ստեղծուեցաւ անխոշտօնելի
Հայ Սփիւռքը, որուն մղձաւանջը կը ձեւէ առ հասարակ մեր հոգիներուն վրայ:

Առաջին համաշխարհային պատերազմէն ապիւն, երբ մեր աղետը առաւ
անչափելի խորութիւն ու փշուռեցան մեր բոլոր յոյսերը՝ սպառնումով ան-
ձերոշ, ոչնչացումով հայրենի ներշնչումներէն, ոգիէն ու կեանքէն՝ բացուեցաւ
մեզի համար սպառնալից անյոշնջը կորուստին: Երբ ոչիւր և խղձմտանքով
նկատի չառնուին այն բոլոր էական միջոցները, որոնք տակաւին կրնան
ապահովել երկարաձգումը մեր տոհմային գոյութեան օտար երկիրներուն
տակ, աւաղելի է մեր կացութիւնը:

Սփիւռքը երկրորդ Հայաստան մըն է, ցրուած ու տարածուն և եկրակայ
բնաջնջումի սպառնալիքին, քան այն իսկական հայրենի աշխարհը, ոչր
ամփոփ կ'ապրի շուրջ մէկուկէս միլիոն հայութիւն մը:

Սփիւռքը պէտք է ըլլայ փոքրիկ Հայաստանին ամէնէն զօրաւոր նեցուկը,
և ամէնէն յոռաւից սպառնալիքի պատրաստողը՝ երոպական և ամերիկեան
հողերու վրայ կրթութեամբ երիտասարդութեան մը բերելիք նպատակներով: Մա-
կայն այս ամէնը պայմանի մը հետ կապուած է, պայմանի մը՝ որ անհրա-
ժեշտութիւն է:

Հայ նոր սերունդը, ապաստանած օտարին գիրկը, պէտք է ամուր բռնէ
իր ազգային սկզբունքները: Ահա միակ և վերջնական պայմանը:

Տիտը է ընդհանրապէս իրականութեան պատկերը: Բացի քանի մը
սակաւարիւ բացառութիւններէ՝ իբր խմբական ձեռնարկ կամ իբր անհատա-
կան մտայնութիւն և եռանդ, մեծ զանգուածը կրնաւոր տեղական կեանքի
հոսանքէն և օտար քաղաքակրթութեան մը խաբուսիկ փայլէն՝ վտանգի մէջ
է անխոշտօնելի կորուստին: Ասկէ ահա մեծագոյն մտատանջութիւնը՝ որ
ահաւոր տագնապի մը հանգամանքը կ'առնէ մեր մտքերուն մէջ:



* * *

Ի՞նչպէս փրկել Հայ Սփիւռքը: Հարց մը որ ստեղծուածի պէս բարդ է և
յաճախ մատնած է շատերը շուրջ մտահոգութիւններու:

Տեղական լեզուի սպառնալիքին և նրբացած քաղաքակրթութեան հրա-
պոյրին դէմ ամէնէն առաջ կանգնելու է ազգային լեզուի թուաբեր: Այդ բռնաբեր,
նորիւ խօսքով, մեր դպրոցներն ու վարժարաններն են, որոնց մէջ ամփո-
փելու է մեծագոյն բռնով հայ մանկութիւնն ու պատանեկութիւնը ի գին ամէն
գոնողութիւններու, և դրոշմելով անոնց հոգիէն ներս ազգային պատմութեան,
լեզուի ու գրականութեան սերն ու պաշտամունքը՝ չրոյտը որ անոնք օտա-
րական իրենց նախնեաց ոգիէն, խզելով կապը լեզուին ու աշխարհայիններուն:

Այս ձեռնարկին երբ կու գայ աջակցիլ Մամուլը, վառ պահելով ժողո-
վուրդին մէջ ազգային ոգին, ազգային աշխարհայինները, քերտրելով ոչո-
ղութիւն, արագրելով սխալ քայլերը և համառօտ՝ պայքարելով բոլոր այն
նորաձե երևոյթներու դէմ, որոնք ամէն օր գրեթէ ասպարէզ կ'ելլեն՝ տկա-
րացնելու մեր ձիգերը ազգային գոյնի պահպանումին, կրկնակի կը զօրանայ
դիմադրութեան բռնաբեր ահեղաբաթի յորձանքին դէպի օտարութիւն:

Երբ դպրոցը արդիւնաբերէ, մենք պիտի ունենանք հայ ընտանիքը: Եւ
Հայ Ընտանիքը պիտի ըլլայ գրաւականը մեր գոյութեան շարունակութեան:

Ոճացումի վտանգներէն մէկն է դժբախտաբար, այսօր, նաև օտար ա-
մուսնութիւնը, և քերտ ահաւորագոյն վտանգը: Սերը օրէնք չունի, կ'ընտրի
սովորաբար: Բայց փոքր ժողովուրդներու և կամ գաղութներու համար, որ
խոշոր ազգի մը ճոցը կ'ապրին, այդ օրէնքը չարգելն է օրէնքը և պայմանը՝
փրկուելու համար կորուստէ:

* * *

Ահաւասիկ մեր վերքերը, ամէն օր նորագոյն և ամէն օր աւելի մտա-
հոգի: Բոլոր ազգերն ալ անշուշտ ունին իրենց ցաւերը, իրենց վերքերը՝
առաջ եկած ներքին բաժանումներէն, քաղաքական և կուսակցական պայ-
քարներէն, բայց պետական կազմակերպութեան մը ցանցին մէջ բռնուած կը
ճառայեն յաճախ գաղափարներու յեղաշրջումին ու զարգացման:

Մեր պարագան նոյնը չէ: Երբ ներքին չէ մեզի պետութեան մը մէջ պե-
տութիւն կազմել, բոյլատրուած է, սակայն, ունենալ մեր միութիւնները, ամ-
փոփոխիլ, և կազմել մէկ ճակատ մեր ազգային պայքարը մղելու մէջ:

Արեւելքի և արեւմուտքի, հիւսիսային ու հարաւային Ամերիկայի Հայ-
կական Սփիւռքը նոյն ցաւերով չէ որ կը տառապի: Արեւմտեան և Ամե-
րիկեան հողամասերուն վրայ ապաստանած հայութեան ձախառագիւրը ազ-
գայականման տեսանկէտով՝ բնականաբար աւելի մտահոգի է այսօր քան

Հիշանալի, Սիբիրոյ և Եգիպտոսի հայ գաղութները, ուր հայկական ոգին և մշակոյթը տակաւին իբր զօրաւոր ազդակ գոյութիւն ունի:

Անժխտելի է թէ ազգային զանազան Միութիւններ, ինչպէս Հ. Բ. Բ. Միութիւնը, Կոնստանդնուպոլսի կազմակերպութիւններ՝ գովելի և խրախուսելի ձեռնարկներով կը յեղեղեն շարունակ անհրաժեշտութիւնը Միութեան փրկութեան, նոյնիսկ քաղերով գերմարդկային ձիգեր՝ գիտակցութեան բերելու համար քմրամ ոգիները: Սակայն եթէ այս միտումս պայքարը չի յանգիր բռնաժելու մեր վերքերը՝ պատճառներ կան անշուշտ նկատի առնելիք. այսպէս ա) հիշընկալող երկիրներու քաղաքակրթութեան և շեղումն հզօր տիրապետութիւնը մեր հոգիներուն ու մտքերուն վրայ. բ) մեր կրօնական խտիրը որ կը ջրատէ կարգ մը ձեռնարկներ. գ) միաձակատ կազմակերպութեան պակասը մեր ազգային գործունէութեան մէջ:

Կազմակերպչական բոլոր ձեռնարկները անշուշտ սպառնաւ չեն, և դեռ կարելի է գտնել նոր ձեւեր. բայց ինչ օգուտ՝ երբ մեր սփիւռքային զանգոռածը այնքան մեծ է և տարածուն՝ որ խմբական ո՞ր և է ճրագիր՝ միայն երազային կրնայ բռնիլ:

Եւ սակայն եթէ կարելի ըլլայ կազմել *Գաղութային մարմիններ* իշխան քանիշը քաղաքներու մէջ՝ ուր առուար թիւով ազգայիններ կան, և *Գաղութային կեդրոնական վարչութիւն* մը այդ բոլորին վրայ հսկող, քաջալերող և ուղղող, անհրաժեշտ միջոցներ հայրաքաղաք ազգայիններու մէջ վառ պահելու համար հոշոր հայրենի գաղափարին և զգացումներուն, այն առեւն գոցի փափաքումս միաձակատ կազմակերպութիւնը կարող ըլլայ դեռ երկար դիմադրելու օտարացումի ահաւոր սպառնալիքին դէմ:

Բայց ինչպէս իրագործել զայն: Հոս է ահաւասիկ դժուարութիւնը:

Այս գաղափարը կը դառնայ իրագործելի այն առեւն միայն՝ երբ սերն ու համերաշխութիւնը, երբ ազգային ձգնարիտ գիտակցութիւնը՝ առանց խտրութեան և կոնստանդնուպոլսի պայքարներու, տիրապետէ մեր բոլոր երկրներէն, կոնստանդնուպոլսի վրայ: Կը դառնայ իրագործելի՝ երբ ազգին բոլոր մեծահարուստները, միութիւնները, կրօնական յարանոքանութիւնները՝ միացնեն անխտրաքար իրենց ձիգերը այս ուղղութեամբ, երբ համազգային տարեկան տոյքի մը հանգանակութեամբ կազմուի կեդրոնական գանձանակ, որուն մասնակցի աւելն հայ՝ համաձայն իր կարողութեան, հնարաւոր դարձնելու համար գործադրութիւնը ազգապահպանման ի նպատակ ձեռք առնուած բոլոր ձեռնարկներուն՝ պարօգներու, մամուլի, ազգային տուններու, ևն:

Հարցը կը դառնայ հետեւեալս *Հաւաքական ազգասիրութեան շուրջ*: Անհատները իրապէս կամ ինքնահամոզմամբ կը համարին իրենց պարտքը կատարած ըլլալ իրենց շրջանակին մէջ թերեւ կամ աննշան մասնակցութեամբ

օգտակար ըլլալով կարօտեալներուն կամ հանդէսներու կազմակերպութեանց: Բայց ազգապահպանման ընդհանուր դատը ատով փրկուած չ'ըլլար: Հարկ է ոյժերու միութիւն, անտեղիտալի կամք, գիտակից շրջութիւն, և նա մանաւանդ անկեղծ, անշահախնդիր ազգասիրութիւն:

Մեր նպատակն է շեշտել, - առանց մտադիր ըլլալու վիրաւորել ո՞ր և է կերպով անհատներ կամ Միութիւններ, - թէ հասած ենք կորուստի դռներուն, եթէ հաւաքական ուժեղ ձեռնարկներ չգան ձգնաժամային այս վիճակէն կանգնելու բնաջնջումի դատապարտումս բեկորները հայ ազգին:

Եթէ հզօր միտք մը, անտեղիտալի կամք մը հոսանքին ոյժերը չուղիկ դէպի փրկութիւն, յիշուն տարին չանցած՝ մեր այսօրուան քաղաքիս հարուստ գաղութները կորստումս պիտի ըլլան առ յաւիտ հայրենեան համար: Ու աներկբայօրէն առաջին գծին վրայ՝ *Սմերիկայի, Ֆրանսայի, Արժանքի, Պրագիի, Եւրոպայի, Եւրոպայի, Եւրոպայի* պատմութեան այն սեւ էջը, որ վիճակեցաւ շեղական, հոնգարական և ուրիշ ձուլումս հատուածներու:

Ու այն առեւն առաջիկայի պիտի ըլլայ և անդամանելի մեր կորուստը՝ խոշոր գանգոռածի մը ազգային բռնեւն անդամահատումով, որուն ահա-գանգը կ'առնենք այժմէն զանազան կողմերէն:

Եւր տարիի սեւին վրայ «Բազմավեպ» ի խմբագրութիւնը իբր *Նահապետը* հայ պարբերաբերքերու կը բարձրացնէ իր կոչը Միութեան Հայրենեան՝ ձեռք առնելու ազգապահպանման ի նպատակ աւելն ձիգ՝ կազմելով *պայքարի մէջ ճակատ* միացեալ ոյժերով, համերաշխ գործունէութեամբ *տոկալու և պայքարելու ճերմակ ջարդին դէմ*՝ ներկայի մեր միակ թշնամիին:

Եթէ իշխանալիքը գաղութներու մէջ ծայր տրուի նման կազմակերպչական աշխատանքներու, այն օրը հիմնաքարը դրուած պիտի ըլլայ մեր գաղութային փրկութեան, և բովանդակ աշխարհի առջեւ ապացոյցումս պիտի ըլլայ՝ թէ հայ ժողովուրդը գիտէ դաս քաղել իր տխուր անցեալի պատմութենէն:

Հ. Մ. ՃԱՆԱՇՆԱՆ